ՆԱԽՆԻՆԵՐԻ ԿԱՆՉԸ

Օ–Ո

1. Բաղաձայնից հետո ո տառն արտասանվում է օ, երբ հաջորդող բառի կամ արմատի սկզբնատառ է, օրինակ՝ կողմ-նորոշվել, անորակ, անողնաշարավոր:

2. Բառամիջում ձայնավորից հետո ո-ն արտասանվում է վօ, երբ հաջորդող տառի կամ արմատի սկզբնատառ է, օրի-նակ՝ արջաորս (արջավօրս), ամենաորակյալ (ամենավօրակ-յալ):

3. Կ և չ մասնիկներից հետո ո-ն վօ է արտասանվում, քանի որ ո-ն հաջորդում է ը ձայնավորին, օրինակ՝ կորսա կ(ը)որսա, չորոշի չ(ը)որոշի:

4. Բառասկզբում օ հնչյունը գրվում է օ տառով, օրինակ՝ օր, օգուտ, օրացույց, օգոստոս, Օշական:

Բացառություն են ով և դրանից կազմված ովքեր, ովևէ, ովևիցե բառերը, որոնց սկզբում արտասանվում է օ, բայց գրվում է ո տառը:

5. Բառամիջում օ է գրվում այն դեպքում, երբ օ-ն արմա-տի կամ բառի սկզբնատառն է, օրինակ՝ այսօր, անօգնական, ոսկեզօծ, տափօղակ, ապօրինի, կօգնեմ:

6. Մյուս բոլոր դեպքերում բառամիջում և բառավերջում օ արտասանվելիս գրվում է ո տառը, օրինակ՝ խոսել, թատրոն, քանդակագործ, Մեսրոպ, Մարո:

7. Բառասկզբում վօ արտասանվելիս գրվում է ո, օրինակ՝ ոսկի, որակ, որտեղ, Ոստանիկ, Ոսկանյան:

Բացառություն են կազմում մի շարք օտար բառեր, որոնց սկզբում վօ արտասանվելիս գրվում է վո, օրինակ՝ վոլեյբոլ, վոլտ, վոկալ, Վոլգա, Վորոնեժ, Վոլոդյա և այլն:

Այս կանոնին չեն ենթարկվում վաղ անցյալում փոխառ-ված մի քանի բառեր, ինչպես՝ Ոդիսևս, ոդիսական, Որմիզդ, Որմիզդուխտ:

Առաջադրանքներ

1. Լրացրո՛ւ բաց թողնված տառերը՝ *օ* կամ *ո*:

_րմնադիր, վեհ_րեն, օրեց_ր, մեղմ_որ, _վկիանոս, երր_ոդ, ան_ինական, _զնի, հանր_գուտ, շաբաթ_ոյա, չ_ոշել, _ոավարձ, ոսկե_ղ, _վքեր, հատ_ոյակ,կիսա_ղորկ, ծափ_ղջույն, ապ_ինի, օրըստ_ոե, ամենա_ոակյալ:

2. Փակագծում տրված բառերում ավելացրո՛ւ բաց թողնված *օ* կամ *ո* տառը և տեղադրի՛ր տեքստի համապատասխան նախադասություններում:

Երկնքից _____ ժպտաց արեգակը, _____ _____ սար ու ձոր, արթնացրեց ծաղիկներին: Կակաչը բացեց _____ աչքերը, _____ նազեց մանուշակը....: Ձմռան _____ _____ ամիսներից հետո բոլորը, _____ միմյանց, ուրախ համերգով ասես օրհներգեցին արևին:

(քնքշ_ոեն, սև_ոակ, մի_ինակ, մեղմ_ոեն, ընդ_ինակելով, ոսկեզ_ծեց, նրբ_ոեն, տրտմ_ոոր)

3. Լրացնել բաց թողնված տառերը *օ*, *ո* կամ *վո*:

Տափ_ղակ, փ_ղ, առ_ոյա, թռչն_ոս, _ղորկ, ան_ոգանական, բար_ություն, բար_ոակ, անդ_ոություն, աման_յա, **ան_ինական**, ան_ոսալի, **ան_գուտ**, _ոբանոց, հայ_ոդի, _վքեր, **ան_ոեն**, _դանավ, սալոր_ղի, **քնքշ_ոեն**, ան_գտակար, _տանա_ր, **դեղնազ_ծ**, _ոոան, մի_ինակ, ամենա_ոակյալ, շտապ_գնություն, ջր_ինեք, զին_ր, _լգա, ամեն_ոյա, ան_թևան, մեղմ _ոոր, ջր_ինեք:

4. Կազմի՛ր նախադասություններ 3-ոդ առաջադրանքի թավ գրված բառերով:

5. Վերը թվարկված բառերից վեցը ենթարկի՛ր բառակազմական վերլուծության:

6. ա) Կարդա՛ Հովիկ Վարդումյանի «Կաչաղակը» բանաստեղծությունը և լրացրո՛ւ բաց թողնված տառերը:

– Ա՛յ կաչաղակ, չաչանա՛կ, Ամբ_ղջ օրը չի՛կ, չա՛կ, չա՛կ, Չես հեռանում մեր բակից, Ի՞նչ ես ուզում ինձանից: Պանիրը տվի ագռավին, Համով ձուկը՝ մռռանին, Ծիտիկներին՝ մի բուռ ց_րեն, Չնեղանան, չխռովեն, Իսկ Սևոյին մի մեծ ոսկ_ր, Որ կուշտ լինի մինչև կես_ր:	Ուշացել ես այս_ր դու, Ոչինչ չկա քեզ տալու: – Պետք չէ պանիր, ո՛չ էլ ձուկ, Ո՛չ էլ ց_րենը մի բուռ: Ժամացույցը քո _սկի, Իմ թոռնիկին նվիրիր, Որ ճիշտ ժամը իմանա, Էլ դասերից չուշանա:

բ) Նախորդ բանաստեղծությունից դո՛ւրս գրիր *ռ*–ով սկսվող բառերը և դրանցով կազմի՛ր նոր բառեր:

գ) Հ. Վարդումյանի «Կաչաղակը» բանաստեղծությունից դո՛ւրս գրիր *ա* վանկարար հնչյուն ունեցող երկու թռչունի անուն: Թռչուններից մեկի մասին գովա՛զդ պատրաստիր: